կողմից՝ Վ. Խորէնին, յանուն Ղարաբաղի հայութեան՝ Գ. Բալայեանը, Ամերիկահայ դաղութի կողմից՝ Ա. Միքայէլեանը, պետական ծառայողների կողմից՝ Վ. Ահարոնեանը, Ուսուցչական Միութեան կողմից՝ Ա. Տէր-Թովմասեանը, Կանանց Միութեան կողմից՝ օր. Լ. Տէր-Սարգսեանը, Երևանի քաղաքային ինքնավարութեան կողմից՝ Մ. Մուսինեանը և ուրիշներ:

Առանձնապէս տպաւորիչ էր կաթուղիկոսի ճառը, որ անդլիական զինուորականների ներկայութեամբ հրաւէր էր կարդում հայ ժողովրդին «յոյս չդնել օտարի վրա, որովհետև մեր ժողովրդի բարօրութիւնն ու յառաջադիմութիւնը մեզանից է կախուած բացառապէս: Այժմ, երբ Մասիսը մաղնիսի պէս քաշեց ու միացրեց հայութեան երկու հատուածները, երբ ստեղծուեց Միացեալ Հայաստան, այժմ պէտք է լարենք մեր ազգային բոլոր կարողութիւնները՝ փրկելու և դաստիարակելու մեր ժողովուրդը ի փառս իր ազատ հայրենիքի»:

Վ. Քրմոյեանը Արևմտահայ Գործադիր Կոմիտէի կողմից կարդաց հետևեալ յայտարարութիւնը. «Կանգնած մնալով Արևմտահայ Բ. Համագումարի ընդունած քաղաքական բանաձևի տեսակէտին վրա՝ Արևմտահայ Գործադիր Մարմինն իբրև Հայկական Հանրապետութեան սահմաններու մէջ ապրող արևմտահայերու ներկայացուցչական օրգան, լսելով կառավարութեան յայտարարութիւնը Հայաստանի միացման և անկախութեան մասին, սրտագին կողջունէ կառավարութեան կատարած աքթը և իր լիակատար պատրաստակամութիւնը կը յայտնէ Հայաստանի Խորհրդարանի և կառավարութեան մէջ իր գործօն մասնակցութիւնը բերել՝ իրագործելու Միացեալ Հայաստանի դաղափարը և ամրապնդելու հայ ժողովրդի ազատութիւնն ու բարգաւաճումը»:

Ճառերից յետոյ կարդացուեցին բազմաթիւ շնորհաւորական դրութիւններ ու հեռագիրներ Հայաստանի դանազան կողմերից և արտասահմանից: Շնորհաւորում էին Վրաստանի Սահմանադիր ժողովն ու վարչապետը, Ազրբէջանի Խորհրդարանն ու կառավարութիւնը, Լեռնականները, Վրահայոց Ազգ. Խորհուրդը, Անդրկովկասեան Ասորական Ազգ. Խորհուրդը, երիտասարդ գրողներ Ստ. Զօրեանը, Մ. Մանուէլեանը, Լէյլին, և շատ ուրիշներ:

Ժողովը խորունկ լռութեան մէջ, յոտնկայս յարգեց Արամի յիշատակը և խանդավառ ոգևորութեամբ ցոյցեր արաւ հայկական բանակի ներկայացուցիչներ զօր. Նաղարբէգեանին, զօր. Փիրումեանին ու Դրօին:

Հանդէսը փակուեց «Մեր Հայրենիք»-ով, որից յետոյ վարչապետը պաշտօնական անձերով շրջապատուած՝ դուրս եկաւ Խորհրդարանի պատշգամբը և ժողովրդին ու զինուորութեան կարդաց Միացեալ Հայաստանի անկախութեան յայտարարութիւնը, որ ընդունուեց որոտագին «կեցցէ»ներով և թնդանօթի 30 հարուածներով:

Ժողովուրդը մինչև ուշ գիշեր, շքերթներով, երաժշտութեամբ, երգ ու պարով տօնում էր օրւայ մեծ դէպքը:

Խանդավառ հանդիսաւորութիւններ տեղի ունեցան և Հայաստանի գաւառներում ու գաղութահայութեան մէջ: